

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՀԱՅԵՐԵՆ ԽԱՂԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ

ՀԵՆՐԻԿ ԲԱԽԶԻՆՅԱՆ

1752 թ. նշանակալից է Սայաթ-Նովա քանաստեղծի կյանքում: Այդ թվականին լրացել է նրա երեսուն տարին, որը նա համարել է իր ուսումնառության և հասունության սահմանը: Այդ թվականին է, որ նա սկսում է երգել նաև մայրենի լեզվով, մինչդեռ նա սկսել էր ստեղծագործել (վրացերեն և անգլերեն)՝ դրանից ուղիղ տասը տարի առաջ (1742):

Սայաթ-Նովայից մեզ հասել է շուրջ յոթ տասնյակ հայերեն խաղ, նրա ինքնագիր երգադանում՝ Դավթարում, դրի առնված 47 հայերեն խաղերից 29-ը թվագրված են նրա կողմից (վրաց փոքր քրոնիկոնով): Հեղինակի որոշ ծանուցումների մեջ էլ նշված են դրանց գրության ամիսն ու օրը (վրացերեն տառերի թվային արժեքներով): Դավթարի մյուս հայերեն երգերը, ինչպես և այն խաղերը, որոնք պահպանվել են Յանի ձեռագրում և այլ աղբյուրներում, թվագրված չեն: Փորձենք գտնել դրանց գրության ստույգ կամ մոտավոր թվականները:

Դավթարում առաջին հայերեն խաղը «Շատ սիրուն իս, շախաթայի ապուղին» դիվանին է, որ գտնվում է 102-րդ էջում և ունի մի հայերեն ծանուցում, որտեղ երգիչը գրում է. «...Հիմի գուզիմ թե հայեվար ասիմ. ամեն ասուված, լիս-մըղղըսու վուրթի Արութինս, պըստուց ինչոր յարսուն տաղին գլուխ դրի ամենան խաղին...»¹: Ելստեղ Սայաթ-Նովան ինքը տեղեկացնում է, որ նախկին վաղ սկսել է ստեղծագործել յառսուն տարեկան հասակում, այսինքն՝ 1752 թվականից (1722+30): Եվ քանի որ սույն դիվանին նրա առաջին հայերեն խաղն է, բնականաբար, այն գրված է 1752 թ.: Բայցի այս, ուշագրավ է, որ Դավթարում այս խաղի բնագրի շուրջ երգիչը երկու ծածկագիր է կազմել, որոնց մեջ ցույց է տվել տվյալ խաղի գրության թվականը և իր տարիքը: Որո՞նք են այդ ծածկագրերը: Գրի առնելով խաղը, երգիչն այն վերցրել է բառանկյուն շրջանակի մեջ, որից դուրս, չորս կողմերում գրել է վրացական չորս առանձին տառ. վերևը՝ Ու, ներքևը, նրան հասակատասիսան՝ Մ, ձախ կողմում՝ Զ, աջ կողմում՝ Ն: Այսպիսով ունենք տառերի երկու զուգորդում՝ ՈւՄ և ԶՆ, որոնք ծածկագրված թվեր են: ՈւՄ-ն կազմում է վրաց քրոնիկոնի 440-ը (Ու=400, Մ=40), որ տալիս է փրկչական 1752 թվականը (440+312): Ուրեմն սույն խաղը Սայաթ-Նովան իրոք գրել է 1752 թվականին: Սա նույնիսկ կարելի է ծածկագիր չհամարել, քանի որ ճիշտ այս սկզբունքով (վրացական տառերով, վրաց փոքր քրոնիկոնով) երգիչը թվագրել է իր մյուս խաղերը: Առավել դժվար լուծելի է ԶՆ ծածկագիրը: Ինչպես գրում է Մ. Հասրաթյանը, «եթե ու և մ տառերն ընդունենք քրոնիկոնի 440 (=1752) թվականը և ն տառի տակ նույնմբեր ամիսը, ապա Զ-ն, որ վրաց այբուբենում 9000 թվանշանը ներկայացնող տառն է, միանգամայն անհասկանալի կդառնա բոլոր տառերի նշանակությունը: Զի ստացվում նաև Զուևու կամ Մեջևու բառերը, որովհետև այս վերջինը սովորաբար նա գրում է Մեջլում ձևով»²:

ԶՆ-ի նշանակությունը պարզ է դառնում, երբ վերծանում ենք Դավթարում այս հայերեն խաղին անմիջապես նախորդող (101-րդ էջի) աղբյուրներին խաղի (Ձ 77) նախավերջին տողի ծածկագիրը. «Սայաթ-Նովան հայից դե-

¹ Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, աղբյուրներին խաղերի ժողովածու, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մորուս Հասրաթյան, Երևան, 1963, էջ 10 (այսուհետև՝ Սայաթ-Նովա, 1963):

² Նույն տեղում, էջ 234—235:

պի վով քայլից», Հեյ-ը և Վով-ը արաբական այբուբենի տառանոններ են, որոնց այբբենական համարների գումարմամբ ստանում ենք 33 (Հեյ-ի համարն է 6, իսկ Վով-ինը՝ 27)։ Սայաթ-Նովան այդ տարիքին է եղել տվյալ աղբրեղաներեն խաղը գրելիս (հեղինակի կողմից թվագրված է՝ 1755 թ. մարտի 4)։ Ինչպես ՎՎ-ի, այնպես էլ ՋՆ-ի միջոցով և նույն սկզբունքով Սայաթ-Նովան մատնանշել է իր տարիքը։ Ջ-ն (Ջիմ) արաբական այբուբենի 5-րդ տառն է, իսկ Ն-ն (Նուն)՝ 25-րդը, դրանց գումարը (5+25) տալիս է երեսուն։ Այս տարիքին է եղել Սայաթ-Նովան սույն հայերեն դիվանին գրելու ժամանակ, այսինքն՝ 1752 թվականին։ Ուրեմն, իրոք Սայաթ-Նովան խաղը գրել է 30 տարեկան հասակում։ Ուրեմն իրոք, Սայաթ-Նովան ծնվել է 1722 թվականին (1752—30)³։ Կարելի է որոշել նաև այս խաղի գրության մոտավոր ամիսը։ 1754 թվականի մարտին, արքունիքից վտարված Սայաթ-Նովան գրում է «Դաստամազտ սիմ ու շարբաթ» հայերեն խաղը, որտեղ դիմում է խոստումնազանց յարին, ասելով.

Դիդարեստ կարոտ մընացի—էրկու տարին թամամ է...

Իդրարեմեն շուտ անցկացար, ո՛ւր է յարասուն տարին⁴։

Այստեղից Պ. Սևակը կատարել է երկու տրամաբանական եզրահանգում. Սայաթ-Նովային առաջին անգամ պալատից վտարել են «1752-ին, ըստ որում դարձանք», և «Սայաթ-Նովան 1754-ի մարտ ամսին տակավին չէր վերընդունվել աբխազի»⁵։ Ուրեմն, Սայաթ-Նովան պալատից առաջին անգամ վտարվել է 1752-ի գարնանը, ավելի կոնկրետ՝ մարտի վերջին։ Որ նա չէր կարող վտարված լինել ավելի շուտ, վկայում է այն հանգամանքը, որ Հերակլը և Թեյ-մուրադը (Վրաստանի երկու գահակալները) 1752 թ. հունվարից մինչև մարտ ամիսը մայրաքաղաքում չէին։ Նրանք կոփներ էին մղում Գանձակի կողմերում, որտեղից մարտի վերջերին վերադառնում են պարտված⁶։ Այդ անհանդուրժյունից վրդովված Հերակլը, մեր ենթադրությամբ, առանց քննության պալատից վտարում է ամբաստանված երգչին։ 1752 թ. մարտի վերջին է թվագրված «Բլուլի հիդ» թասիլը, որը թերևս հորինված է արդեն արքունիքից դուրս։ Այսպիսով՝ խնդրո առարկա դիվանին գրված է 1752 թվականի մարտի վերջից շուտ, երբ երգիչը տակավին արքունիքում էր։ Բնականաբար այն պետք է գրված լինի հունվար-մարտ ամիսներին՝ ավելի հավանական է՝ մարտին։ Ահա թե ինչու։ Ինչպես նկատել է Ն. Աղաբալանը, Սայաթ-Նովայի երգերի մեծագույն մասի գրության ժամանակն ընդգրկում է գարնան սկզբից մինչև աշնան կեսը։ «Այդ երևույթը, — գրում է նա, — եթե մի կողմից արդենք է բանաստեղծի խառնվածքի, մյուս կողմից՝ կապ ունի Թիֆլիսի բարձրի հետ. Թիֆլիսեցիք ուրախ հավաքույթներ անում էին Օրթաճալի և Կրծանիսի այգիներում և իրենց պարտեզներում, որ ասել է գարնան սկզբից մինչև աշնան կեսը։ Սայաթ-Նովան ևս, անշուշտ, այդ ժամանակն էր ամենից ավելի ճնշաբարություն անում խալխին», իսկ տարվա մնացած ժամանակը շատ ազատ ժամանակ ուներ իր արհեստով պարապելու⁷։ Եվ իրոք, Սայաթ-Նովայի հայերեն 15 խաղերից, որոնց մեջ նշված է նաև գրության ամիսը, 3-ը գրված է մարտին, 5-ը՝ ապրիլին, 3-ը՝ մայիսին, 1-ը հունիսին, 2-ը՝ սեպտեմբերին, և 1-ը՝ հոկտեմբերին։ Այսինքն՝ իսկապես գարնան սկզբից մինչև աշնան կեսը։ Նույն բանն են ցույց տալիս նաև աղբրեղաներեն խաղերը։ Այսպես, աղբրե-

3 Այս հայերեն և աղբրեղաներեն խաղերի ծածկագրերի մեր վերծանությունը տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես» (այբուհետ՝ ՊԲՀ), 1976, № 3, էջ 215—220։

4 Սայաթ-Նովա, 1963, էջ 34, 35։

5 Պ. Սևակ, Սայաթ-Նովա, Երևան, 1969, էջ 69։

6 Տե՛ս Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 139—140, 169—170։

7 Ն. Աղաբալան, Ամբողջական երկեր, հ. 2, Բեյրութ, 1966, էջ 174—175։

ջաներեն 19 խաղից, որոնց մեջ նշված է գրության ամիսը, 7-ը գրված է մարտին, 2-ը ապրիլին, 2-ը՝ մայիսին, 6-ը՝ հունիսին, 1-ը հուլիսին և միայն մեկը, որ նրա ինքնակենսագրական խաղն է, գրված է հունվար ամսին: Ի դեպ, մարտին է գրված նաև երգչի քառալեզու խաղը: Կարելի է, ուրեմն, ենթադրել, որ սույն հայերեն դիվանին էլ գրվել է ամենահավանականը մարտ ամսին, քանի որ, ինչպես տեսանք, 1752 թ. մարտի վերջին նա արդեն արքունիքում չէր:

Նույն այդ թվականի մարտ ամսին պետք է գրված լինեն նաև Դավթարում այդ դիվանին հաջորդող չորս հայերեն խաղերը՝ «Դարդ մի անի, ջան ու ջիգար», «Անգաճ արա բարիթավուր», «Դիբա ու հեգիդունիա» և «Յիս մե ղարիբ բլբուլի պես», որոնք նույնպես թվագրված չեն: «Դարդ մի անի, ջան ու ջիգար» խաղը, որ Դավթարում անմիջապես հաջորդում է «Շատ սիրուն իս, շախաթայի ասողին» դիվանին, գրված է վերջինիս ձևով, շնչով ու տրամադրություններով: Այն ևս դիվանի է. ունի մի հեղինակային ծանուցում, որտեղ ասված է՝ «էսպես դիվանի լավ տեղ ասած»: Այս լավ տեղ ասած» արտահայտությունից կարելի է եզրակացնել, որ խաղը երգչին ինչ-որ մի հաճելի միջավայրում (հավանաբար սիրած կնոջ՝ Աննայի ներկայությամբ) ասել-երգել է: Մեզ «լավ տեղի» լավ արամադրությունն էլ ճողովում է բանաստեղծության ափից-ափից⁸, կասկածի տեղ չթողնելով, որ այն գրված է նախքան երգչի պալատից առաջին անգամ վտարվելը. ուրեմն և նորից՝ 1752 թ. մարտին:

Սայաթ-Նովան և նրա սերը փոխադարձ ող արքայադարձ գեղեցկուհին, ինչպես ցույց է տալիս հատկապես հայերեն խաղերի քննությունը, կնքել են սիրո և հավատարմության մի դաշնագրություն: Նրանք իղրար-խոստում են տվել՝ սանձել իրենց զգացմունքը մինչև առավել հասուն տարիքը, ավելի կոնկրետ՝ մինչև իրենց երեսուն տարին: Այս կապակցությամբ ուշագրավ է հատկապես հայերեն բարիթավուրը, որը Դավթարում հաջորդում է «Դարդ մի անի, ջան ու ջիգար» դիվանին: Սա ևս, մեր կարծիքով, գրված է 1752 թ. սկզբին, երբ լրացել կամ լրանում էր երգչի և նրա սիրուհու երեսուն տարին (նրանք հասակակիցներ էին) և իղրար-խոստման ժամկետը: Բարիթավուրը առաջին տան մեջ, ակնարկելով իր տարիքը, նա ասում է.

Չաղ շուռ արի
Յարսուն տարի,
Յարին բեղամա՛ղ մի անի⁹:

Սա ըստ էության տարիներ առաջ տված խոստմանը հավատարիմ մնալու հորդորանք է, որը թերևս բխում է նաև սիրահար-աշուղների մեջ ստեղծված ինչ-որ ավանդույթից: Շարունակության մեջ դիմելով սիրեցյալին, երգիչը ասում է.

Թաք շանցկենաս իղրարեմեն.
Իղրար անիս,
Հոքիս հանիս,
Պըրծընիմ ահուզարեմեն¹⁰:

Այսինքն՝ խոստումդ պահես, խոստումնազանց չլինես (շարունակես սիրել), աղաչանք ինձ տանջանքներից: Եվ ապա խաղի վերջում նորից աղաչում է սիրածին.

Թաք իղրարին դըրուստ կացի.
Կաց իղրարին—
Ահլի շարին...¹¹

8 Պ. Սևակ, Սայաթ-Նովա, էջ 187:

9 Սայաթ-Նովա, 1963, էջ 12:

10 Նույն տեղում, էջ 14—15:

11 Նույն տեղում, էջ 16:

Սակայն, երբ սիրուհին դրժում է խոստումը, և սիրահար-երգչին վտարում են պալատից, վերջինս իր սիրեցյալին անվանում է բեիդրար-խոստումնա-զանց։ Արքունիքից դուրս հորինված «Դաստամազտ սիմ ու շարբաբ» խաղի վերը բերված հատվածում էլ, ինչպես տեսանք, երգիչը սիրուհուն ասում է. «Իդրարեմեն շուտ անցկացար, ո՛ր է յարասուն տարին»։ Այսինքն՝ խոստումդ դրժեցիր, ո՛ր է, անցավ մեր երեսուն տարին։ Մինչդեռ այս բարիթավոր խաղը, ինչպես ցույց են տալիս բերված հատվածները, Սայաթ-Նովան գրել է այն ժամանակ, երբ սիրուհին դեռևս չէր դրժել իր իդրար-խոստումը, երբ երգիչը դեռևս չէր վտարվել արքունիքից, այսինքն՝ նորից 1752 թ. մարտ ամսին։

Դավթարում բարիթավորին հաջորդում է «Դիրա ու ենգիդունիա» գաղելը։ Սայաթ-Նովայի առաջին հայերեն գաղելն է սա, որի հանգով (ձևով) նա գրել է իր մյուս բոլոր գաղելները, որոնցից իննի ժանուցման մեջ, ցանկանալով ցույց տալ դրանց տեսակը, հիշատակել է իր այս առաջին գաղելը։ Հատկանշական է, որ Սայաթ-Նովայի թվական կրող ամենավաղ գաղելը «Դուն էն գլխեն» երգն է՝ գրված 1753 թ.։ Բնականաբար, «Դիրա ու ենգիդունիա» խաղը, լինելով առաջին գաղելը, գրվել է 1753 թվականից առաջ։ Հաշվի առնելով նաև Դավթարում նրա գրաված տեղը, բովանդակությամբ ու տրամադրությունը, այն ևս դրված ենք համարում 1752 թ.։ մարտին։ Նույնը պիտի ասել նաև հաջորդ՝ «Յիս մե զարիբ բլբուլի պես» գաղելի մասին, որը հավանաբար գրվել է նախորդի հետ միասին, քանի որ այս երկու երգերի համար հեղինակը մի ընդհանուր ծանուցում է արել. «էս Արութինի ասած է. զազալի։ էս երկու երգերն մի եղանակով են»¹²։ Իսկ այսպիսի ընդհանուր ծանուցումներ նա դրել է իր այն երգերի համար, որոնք հորինել է նույն ժամանակամիջոցում։

Այսպիսով Դավթարի առաջին հինգ հայերեն խաղերը գրված են 1752 թ. և ամենայն հավանականությամբ՝ մարտ ամսին։ Հաջորդ 10 խաղերը, որոնք ևս Դավթարում թվագրված չեն, մեր կարծիքով, գրված են 1753 թվականին։

Ինչպես նշեցինք, պալատից վտարվելուց անմիջապես հետո՝ 1752 թ. մարտի վերջին (իր իսկ ծանուցմամբ), երգիչը հորինել է «Բլբուլի հիդ լաց իս էլի» խաղը։ Միրածից բաժանումն այնքան ծանր հարված է եղել «զարիբ բլբուլի» համար, որ նա շուրջ մեկ տարի «համբարացել է», չի կարողացել հորինել ոչ մի տող։ Այս ենթադրությանն է մղում «Փահրադն միռած» խաղը, որը, հավանաբար, նույնպես գրվել է արքունիքից առաջին անգամ վտարվելուց հետո։ Խաղի շորրորդ տողն այսպես է. «Տասնումեկ ամիս մունջ իմ կացի՝ տարեն էրված իմ»։ Անկասկած երգչի այս վկայությունը ևս իրական հիմք է ունեցել, այլապես խոսքի վարպետը նման բանաստեղծական տող ստեղծելու կարիք չէր ունենա։

Այսպիսով, 1752 թ. մարտի վերջին արքունիքից վտարված երգիչը գրում է «Բլբուլի հիդ լաց իս էլի» խաղը, ապա մոտ մեկ տարի (ստասնումեկ ամիս)՝ «մունջ» մնալուց հետո՝ 1753 թ. (հավանաբար մարտի սկզբին, այդ է հուշում նաև խաղի 14-րդ տողը) հորինում է «Փահրադն միռած» երգը, որտեղ իրեն համեմատում է սպանված Ֆահրադի հետ։ Այս խաղը պահպանվել է միայն Օհանի ձեռագրում։ Կարելի է ենթադրել նաև, որ խաղը գրվել է երգչի՝ արքունիքից երկրորդ անգամ վտարվելուց հետո։ Սակայն իր ոգով, տրամադրությամբ այն առավել հարազատ է 1753—1754 թթ. գրված խաղերին։ Բացի այդ, արքունիքից երկրորդ անգամ վտարվելուց հետո երգիչը այդ իրողության անմիջական ազդեցության տակ գրել է մի քանի հայերեն, վրացերեն ու ադրբեջաներեն խաղեր, ուստի չէր ասի ստասնումեկ ամիս մունջ իմ կացի»։

Մեկ տարի «մունջ» մնալուց հետո Սայաթ-Նովան սկսում է երգել՝ առավել բուռն արտահայտելով իր մեջ կուտակված կարոտն ու տառապանքը։ Այդ թվականին (1753) նա գրում է նաև բազմաթիվ հայերեն խաղեր։ Այս ժամանակ պետք է գրված լինեն «Յիս քու ղիմեթն չիմ գիդի» և «Ուստի՞ գու-

քառս զարիւր բլրուի՝ Թասիքները, որոնք Դավթարում հաջորդում են հիշյալ Երկու գագեցներին: Այս Թասիքների մէջ էլ սիրուհուց զրկված երգիչը զարիւր բլրուի պէս, որը փնտրում է իր կորած վարդին, որոնում է գողալին, փրկու- լում նրա դիզար-պատկերը և արյուն-արցունք Թափում: «Դու վարժ պրտոն, յիս՝ գողալին» տողը ն. Աղրալյանն այսպէս է բացատրել. «Վարդ» բառն անո- րոշ է, հետևապէս, որոնելին ոչ թէ մի կորած բան է, այլ մի նոր ու ցանկալի բան: Մինչդէս «գողալին» որոշյալ է. հետևապէս իր կորածն է որոնում եր- ցիւք»¹³:

1753 թվականին պետք է գրված լինեն նաև այս Թասիքներին հաջորդող երեք մութամազները, որոնցից առաջինը, բոտ երևույթին, ուղղված է Հերակ- լին, թեև խաղի որոշ տողերում, ինչպէս Հերակլին ձեռնված այլ խաղերի մէջ, երգիչն ասես շնորհակալ, կրկին խոստում է սիրուհու հետ: Բանաստեղծը այս մութամազի մի բայաթի տան մէջ, դիմելով ինքն իրեն, ասում է.

Աստըձուն փառք, Փաղկումն իս՝
Դարդըտ հանին արգ արա՛ւ¹⁴:

1753 թ. արդեն մեկ տարի սիրեցյալից զրկված Սայաթ-Նովան դրում է Հերակլին ուղղված «Դուն էն գլխեն» հանրահայտ խաղը (Դավթարում նըշ- ված է տարեթիվը): Այստեղ նա մեծ բանաստեղծին վայել արժանապատիւ- լիան պագցումով արդ է անում՝ խնդրում է արգարացնել իրեն, ցույց տալով իր անմեղությունը: Հասկանալի է, որ 1753 թ. ապրիլի 20-ին, իր իսկ ծա- նուցմամբ, Սայաթ-Նովան գրել է մի աղբրեցաներեն դափիս, որտեղ ասում է.

Դարդս շատ է, ասիլ չիլի աշխարին.
Արգ իմ գրիլ, թողիլ հանի ումուդին,
Արթար կարի, դիվանըս արթար անի,
Սիդ ունենամ՝ ինձ տա կանի օմուդին¹⁵:

Նույն այստեղ, բոտ Երևույթին, ակնարկում է հենց այս «Դուն էն գլխեն» որդ- խաղը: Հետևաբար, պիտի ենթադրել, որ «Դուն էն գլխեն»-ը գրվել է 1753 թ. մինչև ապրիլի 20-ը, իսկ առաջին մութամազը (ինչպէս և մյուս երկուսը) գրվել է մինչև «Դուն էն գլխեն» երգի ստեղծումը, ամենայն հավանականու- թյամբ նորից 1753 թ. մարտ ամսին:

«Դուն էն գլխեն» երգի հետ միասին Սայաթ-Նովան մի այլ արգ-խաղ է գրում նաև իր մեծագործ սիրուհուն: Դա Դավթարում թվագրված (քրոնիկոնի 441 = 1753) «Իս կանչում իմ լալանին» բարդ խաղն է, որտեղ երգիչը ծած- կազրել է Աննա անունը:

Մեր կարծիքով, 1753 թվականին են գրված նաև Դավթարում մութամ- մազներին հաջորդող հինգ դափիաները: Հավանաբար նախապէս սրանց շար- քում է դրվել նաև «Արի ինձ անգաճ կալ» նմանատիպ խաղը, որը երգչի կող- մից թվագրված է (1753, մայիսի 1): Հաս երևույթին, այդ թվականին են գր- ված նաև հիշյալ հինգ դափիաները: Այսպէս է մտածել Մ. Հասրաթյանը, որն «Արի ինձ անգաճ կալ» խաղով է սկսել հայերեն դափիաների շտրքը, իսկ «Առանց թիգ ի՞նչ կունիմ» դափիայի մասին գրել է. «Եստղը զրկում է եղել միւլը 1754 թ. և հայերեն, գուցե երգչի առաջին հայածանքի ժամանակ: Միկրիլ էլ ժողովածուների մեջ հիշտ տեղադրել են 1753 թվականի տակ, թեև զրկու թվականը չի նշված Դավթարում»¹⁶:

13 Ն. Աղրալյան, եղվ. աշխ., էջ 125:

14 Սայաթ-Նովան, 1963, էջ 25:

15 Նույն տեղում, էջ 160:

16 Մ. Հասրաթյան, Սայաթ-Նովանի Դավթարը (ՀՍՍՀ ԴԱ «Տեղեկագիր» 1963, № 11, էջ 9):

Ղափիանների այս շարքի գրության ժամանակը ճշտելու տեսակետից ուշադրամ է առաջին ղափիան, որտեղ նույնպես երգիչն ակնարկում է Հերակլին ուղարկելիք իր արդ-խնդրագրի մասին:

Սալայթ-Նովեն սուայ՝ արդ անիմ Խանին.
Ղարույ ունիմ՝ քու խաթրու ինձ սրայանին...¹⁷

Հետևաբար, այս դափիանն ևս պետք է գրված լինի մինչև «Դուն էն պլսեն» երգը, այսինքն՝ 1753 թ. մարտ-ապրիլ ամիսների միջև: «Շատ մարթ կոսե» ղափիայի մեջ էլ երգիչն ասում է. «Քի դարթարած տեսնիմ հիզ մաղկապարթին»¹⁸, ինչպես հայտնի է, ծաղկապարզը (ծաղկաբույս) տոնվում է գատկի նախորդ կիրակի օրը, որ ընկնում է մարտ-ապրիլ ամիսների մեջ: Քանի որ «Արի ինձ անգա՞ կալ» ղափիան, երգչի ծանուցմամբ, գրված է 1753 թ. մայիսի 1-ին, ուստի պիտի ենթադրել, որ ղափիանների այս շարքը ստեղծվել է 1755 թ. մարտ-ապրիլ ամիսների ընթացքում:

1754 թ. մարտի սկզբին երկու տարին լրանում էր, ինչ երգիչը հետացվել էր պալատից: Մարտի 1-ին նա գրում է «Դաստամազա սիմ ու շարբաթ հալենն խաղը, որտեղ, ինչպես տեսանք, ինչն իսկ վկայում է. «Դիդարես կալուս մնացի՝ էրկու տարին թամամ է»¹⁹ Երկու տարվա բաժանումից հետո, սակայն, նորից բանաստեղծը հանդիպում է արքայաբոջու նրա անշափ հրահմանքի պատկերումները հղան «Ինձ սիրեցիր, էշխըն բնգար» և «Աշխարում»²⁰ այն չիմ քաշի» սպեկուլյոր, որոնցից առաջինը, իր իսկ՝ երգչի ծանուցմամբ «ասել է մեկ հավատարիմ սիրեկանն», իսկ մյուսը՝ «Սալայթ-Նովեն, ապրիլի 1-ին, քրոնիկոնի 442-ին (1754)»²¹ նույն խաղի մյուս ծանուցման մեջ երգիչն ասել է. «Էս Արուսիկը և իր սիրեկանը որ խոսել էին, էն է. սիրեկանն ասել է ուղղակի Սալայթ-Նովայի էրեսին»²²: Ըստ այդմ, խաղը, որ ասված է Աննայի անունից, իրական դեպքի արտահայտություն է. սիրուհին ուղղակի Սալայթ-Նովայի առաջ արգարացել է. հաստատել իր սիրտ տնկեղծությունը, հիշել իր խղար-խոստումը: Հիշումի, սրանք Սալայթ-Նովայի ամենագլխաթ խաղերից են և թելադրված են արքունիք վերքնդունվելու, ուրեմն և՛ իր «սուլթան ու խան» գոյալի «սիրտուն» վերստին արժանանալու բերկրանքից: Ուշադրություն հրավիրելով «Ինձ սիրեցիր, էշխըն բնգար» խաղի 6-րդ տողի «շաթիբենըն մեկ մտիկ տու միզ» կիսատողի վրա, Պ. Սևակը գտել է, որ «Էս շաթիաթը», այլևայլ տարբերակներով, հաճախ է կրկնվում Սալայթ-Նովայի խաղերի մեջ... Սրանք այնպիսի փաստեր են, որոնց ձևման տակ պարստուր ենք համաձայնելու Մ. Հասրաբյանի այն ենթադրությունը, թե «այալատական մեջխը» խնամքների, ըստ երևույթին, լինում էին շարաթը մեկ անգամ և կյանքն զատելով՝ «շաթիբենըն մեկ մտիկ տու միզ» կիսատողն էլ ստանում է կոմանի գործունեություն՝ հօգուտ այն մարի, որ Սալայթ-Նովան վերահիշյալ երկախոսությունը գրել է արքունիք վերադառնալու տոթիվով, որ, ըստ այսմ, երեկ կատարվել է 1754-ի գարնանը»²³:

Սալայթ-Նովայի հայերեն խաղերից միայն մեկն է, որ թվագրվում է 1755-ին: Դա «Աջար քունի ժամանակ է» ղաղելն է, որ Գ. Ախվերդյանի ժամանակ գտնվել է Դավթարում, իսկ այժմ բացակայում է: 1756 թ. գրված հայերեն խաղերից էլ հայտնի է միայն մեկը՝ «Ընչ կունիմ հեթմե» շիրվանին, որ գտնվում է Դավթարի 132-րդ էջում:

1757 թ. ապրիլի 5-ին Սալայթ-Նովան գրել է երկու խաղի՝ «Մեջլումի պես կորալ յարա» և «Էշխիմենն էնպես վառվիլ իմ»²⁴: Դավթարում իրար հաջորդող այս երկվորյակ խաղերի համար նա թողել է մի ընդհանուր ծանուցում, որտեղ նշել է. «...Արուսիկն ասած, ապրիլի 5-ին, քրոնիկոնի 445-ին (= 1757)»²⁵: Սրանցից շուրջ մեկ ամիս հետո է հորինված նշանավոր «Քանի

17 Սալայթ-Նովայ, 1963, էջ 29:

18 Նույն տեղում, էջ 36:

19 Պ. Սևակ, Սալայթ-Նովա, էջ 70:

վուր ջան իմ» թափարը, որը հեղինակի կողմից թվագրված է «մայիսի 2-ին, քրոնիկոնի 445-ին (=1757)»²⁰։

Բեդմնավոր է եղել Սայաթ-նովայի գրիչը 1758—1759 թվականներին։ Այս մամանակամիջոցում է նա ստեղծել իր լավագույն խաղերի մեծագույն մասը։ Դավթարում պահպանված թվակիր հայերեն խաղերից 11-ը գրված է 1758-ին, իսկ 6-ը՝ 1759-ին։ Արանց մեջ են «Քամանչա», «Բամամ աշխարհ», «Մե խոսկ ունիմ», «Պատկիրքտ զալամով բաշած», «Ինչ ու իմ սիրեկան յա-րին» և այլ նշանավոր գաղելներ։

Դավթարի 7—10 էջերում, այսինքն՝ աղբյուրանական երգերի շարքում են գտնվում «Սագիր ունիս դաստառեհան» և «Մշու սուլթան սուրի Կարապիս» երկերգվյալ՝ հայերեն-աղբյուրաներեն խաղերը, որոնք թվագրված չեն։ Իժմար է որոշել այդ խաղերի հորինման թվականները։ Կարող ենք միայն հաստատաբան ասել, որ դրանք գրված են մինչև 1758 թվականը, քանի որ Դավթարի աղբյուրաներեն երգերի շարքում չկա ոչ մի խաղ, որ գրված լինի այդ թվակա-նից հետո։

Թվագրված չէ նաև Դավթարի 137-րդ էջում գտնվող «Հիմքտ վերստին նորեցին» թերի խաղը։ Վերջինս գրվել է Թիֆլիսի Մուղնու սուրբ Դեորդ եկեղեցու վերակառուցման առթիվ։ Ըստ Մ. Հասրաթյանի, «Մուղնու սր. Դեորդ եկեղեցին Դիմբից վերստին կառուցվել է 1751 թ., ուստի այդ թվականին էլ գրված է այս ծանր»²¹։ Սակայն այստեղ տկնհայտ անճշտություն կա, քանի որ Սայաթ-նովան հայերեն ստեղծագործել է 1752 թվականից։ Այդ անճշտու-թյունն ուղղել է Պ. Հակոբյանը, վկայակոչելով եկեղեցու վերակառուցման արձանագրությունը, որտեղ նշված է այլ թվական. «Թվին Խ. երկհարիսին և անցիլոյ երորդ տմին (1205+3+551=1759)»²²։ «Անճշտության պատճա-ր» — գրում է Պ. Հակոբյանը, — բայտ երևույթին, Մուղնու Կամակատար Աստ-վածածին կոչված եկեղեցու վերանորոգման արձանագրությունն է՝ Դավթար կաթողիկոսի կենդանության օրերում կատարված։ Դավթար կաթողիկոսը վախ-ճանվել է 1751-ին։ Վերանորոգությունը, ըստ այդմ, դրանից առաջ է եղել Թացի այդ, Սայաթ-նովայի համապատասխան խաղը նվիրված է ոչ թե այս եկե-ղեցու, այլ Մուղնու սուրբ Դեորդի նորոգմանը («Հիմքտ վերստին նորեցին, յայդ արին, Մուղնու սուրբ Դեորդ...»), որ 1759 թ. է անգի ունեցել։ Հետ այդմ էլ՝ խաղը գրված պիտի լինի 1759 թ. ոչ առաջ²³։ Արանով որոշվում է նաև «Հիմքտ վերստին նորեցին» խաղի ճշգրիտ թվականը՝ 1759։

Հնարավոր չէ ճշտել Դավթարի 130-րդ էջում գտնվող «Ձիս ասում թե» և «Թեղուր բու քաշն մարբրիտ տան» խաղերի գրության թվականները։ Արան-կի է միայն, որ դրանք գրված են 1752—1759 թվականների միջև։

1759 թ. ևս չբացարձային տարի էր Սայաթ-նովայի կյանքում։ Նա, որ այդ մամանակ առկային չէր թեախիսել իր կյանքի չորրորդ տասնամյակը, երկրորդ անգամ և մեկընդմիջտ վտարվում է արքունիքից ու, դառնալով քա-հանա, հովվում է նախ Պարսկաստանի Գիլան նահանգի էնդելի քաղաքում, ապա Չաքաբաղայի Կախի ավանում։ Իսկ 1768-ին, կնոջ մահից հետո, հալ-նում է կուսակրոնի սքեմ և մտնում Հաղպատավանը։

Մեծ երդիչն ու սիրահարը, բնականաբար չէր կտրող միանգամից և մեկ-ընդմիջտ կալվել աշխարհական կյանքից։ Նա, անտարակույս, շարունակել է նաև ստեղծագործել, իհարկե՝ ոչ նախկին արդյունավետությամբ ու ավյու-նով։ Ապացույց են այն խաղերը, որոնք չկան և չեն եղել նրա խաղերի Դավթ-արում։ ...Իժմար թե Սայաթ-նովայի նման մեկը, — գրում է Պ. Ախար, — ի վիճակի լինե՞ր միանգամից և ընդմիջտ վերջ տալու իր ստեղծագործական

²⁰ Սայաթ-նովա, 1963, էջ 255։

²¹ Ս. Հասրաթյան, Բանագրահորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1883, էջ 69։

²² Պ. Հակոբյան, Սայաթ-նովայի՝ Հաղբարի վանքում լինելու հարցի շուրջը (ԳԲՀ, 1969, № 3, էջ 215-ի մաս)։

մտքին, միանգամից և առմիշտ խցելու իր կյանքի պոռթկուն տկունքը»²³։ Արքունիքից վտարվելուց հետո, քահանա, ապա կուսակրոն քահանապետը, ի պաշտոնե կապված լինելով Աստվածաշնչին, գրել է կրոնական տաղեր, ինչպիսին «Աստուծ խիալ արից սքիթս» հայերեն խաղն է՝ պահպանված մի ձև-սաղիր երգարանում։ Գրել է նաև առակներ, ինչպես՝ «Գեղն ու չորանն» և «Մախուխն ու օխշրի միսն»²⁴, որոնք նույնպես հասել են հետագա գրառումներով հոսելով «Գեղն ու չորանն» առակի վերջին տուն առաջին երկտողի մասին, Գ. Սևակը գրել է. «Ամբողջ խաղի մեջ խոսքը աշված է Գեղին ու Զորանին, և ահա վերջում, հանկարծ... «իսկ կարմիր կով իմ» խոսքը, որ սովորական արտահայտություն չէ, այլ հայ ժողովրդական ծանոթ առածի ալիս-ձևությունը։ «Կովկիթս կտրել իմ՝ հարսից խառվ իմ» տողին միացած՝ այս «կարմիր կովը» կարծես դառնում է մի թաթուն տկնարկ այն եղևությանն, որի, որոնք հետևանքով Սոցաթ-նովայի վտարվել է արքունիքից»²⁵։ Հետևաբար, պետք է ենթադրել, որ խաղը գրված է 1759 թ. հետո, երբեք քահանայության ժամանակ։ Այդպես է ենթադրել նաև Մ. Հասարայանը²⁶։ Կուսակրոնության շրջանում են գրված նաև Օհանի ձեռագրում պահպանված «Մտա էլ խի բուրեն», «Այլի Աստված սիրիս» և «Այլիբիմ կարթացիլ իմ դասեղաս» ծածկագրավոր խաղերը, որոնց կանգրուդատեանը սատրիկ։

Արքունիքից վտարվելուց անմիջապես հետո և քահանայության տարիներին Սոցաթ-նովայի շարունակել է հորինել նաև սիրո երգեր, մշաղհարվ է, որ Զարաթյալում, որտեղ հովվել է նա, լայն տարածում են գտել նրա երգերը։ Ինչպես դրում է աղբյուրների բանասեր Մ. Շյուքյուրովը, «Սոցաթ-նովայի իր ստեղծագործություններով մեծ ազդեցություն է դրածը աղբյուրեղանական աշուղների, մանավանդ Զաքաթյալի աշուղների վրա»²⁷։ Արքունիքից վտարվելուց անմիջապես հետո են գրված «Արթար զատեն» և «Զեռը փիկալ» վրացերեն խաղերը։ Ըստ երևույթին նույն այս ժամանակ է գրված նաև «Աշխարհմեն բեղարիլ իմ» հայերեն երգը։ Այս խաղը Մ. Հասարայանը գրել է իր ժողովածուի հավելվածում և գրել, «Պետք է քնդունել, որ խաղը վերաբերում է երգչին, բռնություն, քահանա ձեռնադրելու սկզբնական ժամանակին»²⁸։ Այդ են վկայում խաղի հետևյալ տողերը, որ ուղղված են Հերակլ արքային.

էյ աղայաթ, հուրմի-հաբիմ, սուչրս ինչ է, ասա ինձի,
վուր հաքցըրի իմ չուղեցած սիվ ու սուր լիրասըն ինձի,
սըմցըրենցիլ անմիղ տիղրն, էս աղուի թասըն ինձի...

«Միվ ու սուր լիրասը» քահանայի սե շուրջաուն է։ Մ. Հասարայանը, սակայն, դարձանայի է համարում, որ քահանապետը բռնի քահանայացման առթիվ կարող էր գրել նաև հայերեն։ Զարաթյալի աշուղ չկա։ Իր այդ մեծ ողբերգության մասին երգիչը կարող էր գրել ու երգել իր իմացած բոլոր լեզուներով։ Իր տրամադրությամբ խաղը հիշեցնում է «Աշխարս մե փանջարա է» հայտնի երգը, որը Կաթիբարի ամենատեղ թվականը կրող խաղն է և, թերևս, գրված է երգչի՝ պոլախից վտարվելուց մի փոքր առաջ։

Որ կրոնավոր Սոցաթ-նովայի կապված է եղել աշխարհիկ կյանքին, երգ ու նվագին, վկայում են նաև մի շարք բանավոր ավանդություններ։ Մի ավանդության համաձայն, Սոցաթ-նովայի ունեցել է Ճալիթա անունով մեկ սրտով սիրած աղջիկ, որն սպրդում էր նորաշենի (Ախալշենի) թաղում։ Ի դեպ, են-

23 Գ. Սևակ, Սոցաթ-նովա, էջ 349։

24 Նույն տեղում, էջ 478։

25 Սոցաթ-նովա, 1963, էջ 253։

26 Մ. Հասարայան, Սոցաթ-նովայի և աղբյուրեղանական գրականությունը (Գրական թերթ, 4, 8, 1963)։

27 Սոցաթ-նովա, 1963, էջ 257։

28 Նույն տեղում, էջ 59։

թաղրվում է, որ այստեղ որոշ ժամանակ հովվել է Տեր Ստեփանոս-Սայաթ-Նովան, Ավանդության համաձայն Սայաթ-Նովան մի շարք այլ խաղերի հետ Տալիթային է նվիրել «Թաքավոր իս, դիվանս արա» երգը²⁹։ Սա շատ հավանական է, քանի որ այս խաղը հասել է զանազան ժողովրդականացված սարբերակներով և չի գտնվել ոչ երգչի և ոչ էլ նրա որդու ձեռագրերում։

Ինչ վերաբերում է Օհանի ձեռագրում և այլ աղբյուրներում պահպանված մյուս հայերեն սիրերգերին, ապա կարելի է միայն ասել, որ դրանց մի մասը գրվել է մինչև 1759 թվականը, իսկ մի մասը՝ երգչի կրոնավորության սկզբնական տարիներին։ Խոսքը վերաբերում է «Աչկ ու ունքտ վեր իս թողի», «Խաբար գնաց բլրուլի մոտ», «Կիսամուրազ մի սպանի», «Հնդու բաղաքմեն հանած», «Սուսան սմբուլ դաստամաղտ» խաղերին։

Անդրադառնալով Օհանի ձեռագրում պահպանված «Մտա էշխի քուրեն», «Այիբ Աստված սիրիս» և «Այիբբիմն կարթացիլ իմ դասեղաս» խաղերին, ասենք, որ դրանց մեջ եղած ծածկագրերի վերծանության մի հնարավոր է լինում որոշել դրանց գրության թվականները։ Վերջին երկու խաղերը ձևով ու տրամադրությամբ նման են իրար, և առաջին իսկ հայացքից զգացվում է, որ նույն ժամանակաշրջանի արդյունք են։ Եվ իրոք, ինչպես փորձել ենք պարզել, դրանք գրված են նույն՝ 1792 թվականին, երբ կուսակրոն երգիչը յոթանասուն տարեկան էր³⁰։ Այդ խաղերի ծածկագրերի հետ փորձելով վերծանել նաև «Մտա էշխի քուրեն» դարահեջայի ծածկագիրը, գտել էինք, որ այն ևս գրվել է 1792 թվականին։ Սակայն մենք ճիշտ չէինք կարգացել այդ խաղի ծածկագիրը և բնականաբար հասել էինք սխալ արդյունքի³¹։ Այժմ փորձենք ճշտել մեր վերծանությունը։ Ինչպես երգչի բոլոր դարահեջաների, այնպես էլ այս խաղի ծածկագիրն արտահայտված է վերջին տողում՝ «էրկու ալիբ, էրկու բեն» հասկածում։ Դա, ինչպես հայտնի է, տալիս է պարսկերեն ար-ար (ջուր-ջուր՝ արտասուք իմաստով)։ Ըստ այսմ, խաղի վերջին երկու տողի ուղղակի իմաստն է՝ Սայաթ-Նովան ասաց. այդ պատճառով աչքերիցս չի պակասում արտասուքը։ «էրկու ալիբ, էրկու բենը» կամ նույնն է՝ արբաբ-ը նաև ծածկագիր է, որ հայտնում է տվյալ խաղի գրության տարեթիվը։ Աբաբ-ի մեջ տեղագրելով ու համադրելով տառերի թվային արժեքները (ա—1, բ—2, ա—1, բ—2), կստանանք 1212։ Դա ոչ այլ ինչ է, եթե ոչ հայոց 1212 թվականը, որ համապատասխանում է փրկչական 1763-ին (1212+551)։ Ուշագրավ է, որ քահանա Սայաթ-Նովա Տեր-Ստեփանոսը՝ իր թվագրությամբ, հայոց 1209-ին (=1760) է գրչագրել նորահայտ նարեկը³²։ Հայոց թվականով է

²⁹ «Հովիտ», 1913, № 15, էջ 231 (տե՛ս նաև 1913, № 13, էջ 198—199, № 14, էջ 214—215)։

³⁰ ՊՐՀ, 1975, № 4, էջ 169—175։ «Այիբբիմն կարթացիլ իմ դասեղաս» խաղի ծածկագիրն դրադեցրել է մի շարք բանասերների, որոնք, սակայն, ուղած ձևով փոփոխել են այդ ծածկագիրը և շեն հասել համոզիչ արդյունքի (տե՛ս Մ. Հասարայան, Սայաթ-Նովայի մի քանի հայերեն խաղերի մասին (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1943, № 3, էջ 42), Ա. Շասուովարյան, Սայաթ-Նովայի մի քանի ծածկագրերի վերծանումը («Երեկոյան Երևան», 13. X. 1963), Պ. Սեւակ, Սայաթ-Նովա, էջ 73—77, Վ. Բաղդասարյան, Լսենք Սայաթ-Նովային («Սովետական գրականություն», 1975, № 2, էջ 148—151), Ա. Գ. Աբրահամյան, Սայաթ-Նովայի «Այբբիմն» խաղի ծածկագրության վերծանությունը (ՊՐՀ, 1979, № 3, էջ 207—213)։

³¹ Այս և Սայաթ-Նովայի մյուս դարահեջաների ծածկագրերի անհամադրվ վերծանումներ է կատարել Վ. Բաղդասարյանը («Սայաթ-Նովայի Դավթարի և մի քանի խաղերի մասին» (ՊՐՀ, 1979, № 1, էջ 233—244), «Սայաթ-Նովայի աղբյուրներն դարահեջաների մասին» (ՊՐՀ, 1980, № 3, էջ 280—285)։

³² Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 10538, էջ 328ա։ Այս նորահայտ ձեռագրի մասին մանրամասն տե՛ս Բ. Զուգասարյան, Սայաթ-Նովայի ընդորինակած նորահայտ մատյանը (ՀՍՍՀ ԳԱ «Լրագրեր», 1981, № 7, էջ 66—77)։

թվագրված նաև Կախավանի ձեռագիրը³³։ «Մտա էշխի քուրեն» խաղն էլ, ուրիմն, Սայաթ-Նովան գրել է իր քահանա եղած ժամանակ՝ 1763 թվականին։ Այսպիսով, Սայաթ-Նովայի ստեղծագործական կյանքն, ընդհանուր առմամբ, տևել է կես դար. սկսած XVIII դարի 40-ական թվականների սկզբից (1742) մինչև նույն դարի 90-ական թվականների սկիզբը։ Իսկ որպես հայ բանաստեղծ, նա ստեղծագործել է քառասուն տարուց ոչ պակաս (1752—1792)։

ДАТЫ АРМЯНСКИХ ПЕСЕН САЯТ-НОВЫ

ГЕНРИК БАХЧИНЯН

Резюме

Певец трех народов Закавказья Саят-Нова начал творить на азербайджанском и грузинском языках с 20-летнего возраста (1742 г.), а на родном армянском языке—с 1752 года, когда ему было уже 30 лет. Под его именем сохранилось около 70 армянских песен, из которых 47 находятся в рукописном песеннике (Давтаре) поэта-ашуга. Из них 29 песен датированы автором. Остальные же, как и те песни, которые сохранились в других источниках, не имеют датировки. Изучение рукописей и известных нам биографических данных поэта позволило определить точные или приблизительные даты этих песен. Оказывается, поэт творил на родном языке не менее сорока лет (1752—1792).

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ. ճարգի կարևորությունից ելնելով՝ գեանդելով բանասեր Հ. Բախչինյանի հոդվածը, որը շնորհակալ գործ է կատարել Սայաթ-Նովայի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրության բնագավառում, խմբագրությունը, սակայն, կարծում է, որ Սայաթ-Նովայի՝ բնության առեր-ված խաղերից բոլորի թվականները չէ, որ նա հիշտ է կռահել կամ ենթադրել։ Ընդ որում՝ հոդվածագիրը շատ դեպքերում դրանք առաջադրում է որպես վար-կած։ Սայաթ-Նովան աշուղ է, նրա հորինածները աշուղական խաղեր են, պա-լատական հավաքույթների, ժողովրդական տոնախմբությունների ու մրցու-թյունների ժամանակ հանպատրաստից հորինված ստեղծագործություններ, հետևաբար դրանց հետ չի կարելի վարվել որպես բնական օրագրերի և ժա-մանակագրական հերթականություն որոնել։ Կարծում ենք նաև չէր կարելի Սայաթ-Նովայի սիրային բանաստեղծությունների մեծ մասի հերոսուհուն դարձնել արքայադուստր Աննային։

Առանձին խաղերի մեջ հոդվածագիրը տեսնում է ինչ-որ ծածկագրե-ված թվականներ և նրանց գրությունը վերագրում մինչև անգամ 1792 թվա-կանին։ Իրականում Սայաթ-Նովայի սեփական դավթարի և նրա որդի Օհանի՝ խմբագրում հիշողությամբ վերադարձված հայերեն խաղերի բնագրերի ու-շաղի բաղադրությունն ու վերածությունը այն եզրակացության են բերում, որ որդին հոր խաղերը սովորել է նրա ինքնագիր դավթարից և հետագայում այդ խաղերի բնագրերը հիշողության մեջ վերախմբագրել է ու տղավաղել։ Փաստ է, որ Սայաթ-Նովայի ինքնագիր դավթարում 1759 թ. հետո գրված խաղեր առ-հասարակ չկան։ Այս պատճառով անա խիստ վիճելի են «Այբբիմն կարդացիլ իմ դասնյաս...», «Այիք Առաված սիրիս...», «Մտա էշխի քուրեն...» խաղերի մեջ ծածկագրություն որոնելը և նրանց գրությունը 1792 կամ 1763 թթ. վերա-գրելը։